ԶԱՐՀՈՒՐԵԼԻ[1] ՍԵՐ ԵՎ ՀԱՐԳԱՆՔ

[Մեր մամուլի մեջ] Ամեն անգամ, երբ [դուրսը, մի որևէ ժողովուրդ] խոսք է լինում օտար գրողների կամ գրականությունների մեջ պատահած [լավագույն] լավ երևույթների ու վերաբերմունքների մասին, մեր մամուլը, առանձնապես «Մշակը», միշտ կրկնում է. «Ահա թե ինչպես են [վերաբերվում] օտարները սիրում ու պահպանում իրենց գրողներին ու գրականությունը - իսկ մենք ինչ ենք անում…»։ Բայց ամեն անգամ, պարբերաբար, կարծես հենց շարած պահում են էդ տողերը։ Եվ ամեն անգամ էլ, ու առանձնապես «Մշակը» էդ տողերից հետո դուք տեսեք թե ինչ է անում։ Եվ, բնականաբար, էսօր էդ թերթն ու հայոց գրեթե բոլոր գրողները թշնամական հարաբ<երությունների> մեջ են։ Եվ էդ է պատճառը, որ ով մի որևէ գրողի դեմ մի անկարգ խոսք ունի ասելու, գնում է մտնում էնտեղ կամ ուրիշ խոսքով էնտեղ մտնելուց հետո էլ չի կարող մնալ վայելչության սահմաններում, պետք է անպատճառ [կծի], բայց իհարկե, ավանդական սիրո ու հարգանքի [հավաստիացումներից] հավաստիացումներ անելուց հետո։ [Եվ ահա, հայոց գրականության ու գրողի համար հերիք չեն եղած դժբախտ հանգամանքները, դրանց վրա ավելանում է և [մեր մամուլի] էդ [մարդկանց] սերն ու հարգանքը, որ ես ուրիշ կերպ չեմ կարող անվանել, եթե ոչ միայն զարհուրելի] [փարիսեցու]։ Ես իմ գրական կյանքում մի քանի անգամ դժբախտություն եմ ունեցել էդ թերթի «սիրո ու հարգանքի» [սաստկությունը զգալու և] դեմ ինձ պաշտպանելու։ Իսկ շարունակ ականատես եմ եղել, թե ինչպես սրան ու նրան են աշխատել շարունակ խեղդել ու կեղտոտել իրենց սիրառատ ու մրառատ գրկի մեջ։ Իսկ էսպես կոչված ընթերցող հասարակությունը… — նրանք լավ են ճանաչում էդ հասարակությանը— իսկ վաղվա մասին չեն հոգում։ Վաղը— թեկուզ ջրհեղեղ։

Ահա հենց էս մոտիկ օրերից [նմուշի համար] մի երկու նմուշ։

Տոնում են պ. Ա. Քալանթարի հոբելյանը։ Է՜, շատ լավ։ Էդտեղ հո հայոց գրողներին չպետք է վիրավորեն, մանավանդ որ նրանց «միշտ հարգում է» «Մշակը»։ Բայց դուք

[1] «Զարհուրելի» բառի վեր կա նաև՝ «փարիսեցու»։

տեսեք ծերը որտեղ է գնում։ «Մշակը» Քալանթարի մասին լավ-լավ բաներ է գրում։ Դարձյալ իրենց ու իրենց կարդացողների բանն է։ Մինն առաջարկում է դպրոց հիմնել պ. Քալանթարի պատվին, մյուսն առաջարկում է, կարծեմ Գենջյան, դպրոցների դպրոց հիմնել, մրցության մեջ պ. Տ. Նազարյանը գերազանցում է ամենքին— առաջարկում է հիմնել մի կոլոնիա— Քալանթարապատ, մեկը և՛ դպրոցների դպրոց, և՛ թատրոն, և՛... վերջապես [թեկուզ] [ամեն բան] ամենքը մեջը։ Պարոն Գ. Բալասանյանն էլ անում է իր առաջարկը և գրում է, որ նյութականը չպիտի մոռանալ («Մշակ»...)

Դրանից հետո փող են ուղարկում…